



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9759 գործարքներ, որոնց քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 23.0%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ՝ 6.5 %-ով:

2004թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4168 օտարման գործարքների 90.5%-ը կազմել են առուվաճառքները, 8.7%-ը՝ նվիրատվությունները և 0.8 %-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34,3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 36,4%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. դեկտեմբերին, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 23.4%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ՝ 11.8%-ով: 2004թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66,6 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.1%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ՝ 3.8%-ով:

2004թ դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/ԱՄՆ դոլարը 2004թ. դեկտեմբերին համարժեք է 486,3.0դրամ/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		դեկտեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2004թ.	նոյեմբեր 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	415.4	507.7	497.8
Արաբկիր	250.0-560.0	309.8	407.9	401.5
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	195.2	249.8	242.8
Նոր-Նորք	115.0-250.0	153.5	222.5	216.1
Ավան	120.0-230.0	154.3	210.5	204.5
Էրեբունի	120.0-300.0	166.6	199.4	195.8
Շենգավիթ	120.0-270.0	164.2	240.5	234.5
Դավթաշեն	130.0-320.0	198.1	254.5	249.7
Աջափնյակ	120.0-300.0	175.9	234.8	228.1
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	161.2	230.8	226.9
Նուբարաշեն	75.0-120.0	70.8	95.5	93.8
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	75.0-970.0	196.8	259.4	253.8

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. դեկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2,2 % :

2004թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 455 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 4,2 %-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ՝ 6,4 %-ով:

2004թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			դեկտեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2004թ.	նոյեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	62.9	73.7	72.0
	Այարան	20.0-50.0	27.4	39.2	38.0
	Թալին	20.0-50.0	25.2	32.5	32.0
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	54.8	60.7	59.5
	Մասիս	40.0-90.0	54.4	64.2	64.2
	Վեդի	30.0-60.0	31.7	42.9	42.8
	Արարատ	30.0-60.0	31.6	43.5	42.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-130.0	84.8	111.5	109.9
	Արմավիր	40.0-80.0	45.8	68.1	67.6
	Մեծամոր	20.0-50.0	30.9	32.9	32.7
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	30.7	37.0	35.8
	Գավառ	20.0-50.0	30.5	34.1	33.6
	Մարտունի	20.0-60.0	29.7	36.6	36.6
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.6
	Ճամբարակ	13.0-30.0	17.1	18.1	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.1	67.1	65.8
	Ստեփանավան	20.0-55.0	33.4	37.0	37.0
	Սյիտակ	30.0-70.0	24.1	47.5	44.7
	Ալավերդի	15.0-40.0	25.6	26.5	26.5
	Տաշիր	15.0-45.0	19.4	25.5	25.5
Կոտայք	Աբովյան	45.0-150.0	84.3	112.5	110.5
	Նոր Հաճն	50.0-110.0	52.3	81.7	80.5
	Բյուրեղավան	30.0-90.0	35.2	50.6	50.4
	Եղվարդ	35.0-80.0	40.7	57.8	55.8
	Հրազդան	30.0-85.0	31.1	50.5	47.8
	Ծաղկաձոր	40.0-130.0	75.8	93.5	92.5
	Չարենցավան	30.0-85.0	31.1	45.8	44.8
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	72.0	78.6	77.6
	Արթիկ	20.0-45.0	25.3	31.5	31.5
	Մարալիկ	18.0-45.0	23.7	28.4	28.4
Սյունիք	Գորիս	25.0-70.0	29.7	41.7	40.0
	Կապան	20.0-60.0	29.5	34.9	34.9
	Սիսիան	20.0-60.0	27.6	37.8	37.8
	Մեղրի	18.0-58.0	25.2	26.1	25.9
	Ազարակ	18.0-50.0	24.5	25.2	25.2
	Քաջարան	13.0-40.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	30.0-70.0	35.3	43.7	43.7
	Եղեգնաձոր	40.0-90.0	46.9	57.8	55.8
	Ջերմուկ	40.0-100.0	41.2	63.8	62.8
Տավուշ	Դիլիջան	30.0-70.0	36.2	47.1	45.1
	Իջևան	40.0-90.0	40.4	59.5	58.2
	Բերդ	25.0-60.0	29.3	37.4	36.4
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7

2004թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1,7% :

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 440 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 93, մյուս մարզերում միասին վերցրած՝ 347: 2004թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 19.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 1,5%-ով: 2003թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 20,3%-ով, ընդ որում՝ Երևանում նվազել է 29,0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 17,6%-ով:

2004թ. դեկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. դեկտեմբեր /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		դեկտեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2004թ.	նոյեմբեր 2004թ.
Կենտրոն	255.0-1000.0	430.1	510.0	500.1
Արաբկիր	205.0-900.0	314.9	410.1	403.4
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	198.1	251.4	244.8
Նորք-Մարաշ	120.0-550.0	314.6	350.4	347.9
Ավան	125.0-280.0	152.1	211.8	205.9
Էրեբունի	130.0-320.0	163.7	201.6	197.8
Շենգավիթ	120.0-350.0	165.9	242.5	237.1
Դավթաշեն	140.0-700.0	196	255.7	251.3
Աջափնյակ	125.0-320.0	172.3	236.3	230.9
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	160.9	233.6	228.9
Նուբարաշեն	65.0-150.0	73.6	98.4	95.1
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>65.0-1000.0</b>	<b>212.9</b>	<b>272.9</b>	<b>267.6</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գնի, ամսական աճը կազմել է 2,0%:

2004թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. դեկտեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			դեկտեմբեր 2003թ.	դեկտեմբեր 2004թ.	նոյեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	83.0	87.4	87.2
	Ապարան	25.0-60.0	38.8	39.6	39.5
	Թալին	20.0-65.0	28.1	35.2	35.2
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	62.4	62.3
	Մասիս	50.0-90.0	62.5	65.7	65.5
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	49.4
	Արարատ	20.0-65.0	37.5	46.3	46.1
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.8	114.5	111.1
	Արմավիր	35.0-90.0	52.4	71.2	69.0
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	42.3	42.3
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	41.1	41.1
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.9	21.8
	Ճամբարակ	15.0-50.0	19.7	22.4	22.4
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.0	71.0	70.9
	Ստեփանավան	15.0-60.0	33.7	50.3	49.4
	Սպիտակ	20.0-60.0	24.1	50.2	49.4
	Այվերդի	15.0-50.0	25.9	30.0	29.7
	Տաշիր	15.0-55.0	19.9	28.5	28.5
Կոտայք	Աբովյան	70.0-130.0	92.6	118.1	114.3
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	85.3	81.6
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	51.6	51.4
	Եղվարդ	40.0-80.0	47.3	59.9	57.5
	Հրազդան	25.0-65.0	40.2	53.0	49.7
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.3	100.7	98.6
	Չարենցավան	25.0-65.0	33.4	47.4	45.7
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.0	92.2	91.8
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.5	33.5
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.7	29.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.7	44.2	43.1
	Կապան	20.0-60.0	31.1	36.6	36.4
	Սիսիան	20.0-60.0	28.7	40.3	39.0
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.7	28.7
	Ազարակ	15.0-50.0	26.9	28.3	28.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	47.0	44.8
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.3	58.7	56.6
	Ջերմուկ	25.0-65.0	43.4	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	58.2	57.0
	Իջևան	35.0-80.0	41.2	60.7	59.1
	Բերդ	20.0-60.0	30.9	38.4	37.2
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.1

2004թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսական աճը կազմել է 1,7%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 6894,04 հա /այդ թվում՝ 29,19 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 6814,52 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 6878,08 հա հողերի /այդ թվում՝ 28,45 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 6802,42 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 6 միավոր /2.98 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 1 -ը /1,79 հա/ Երևանում :

Օտարված 13,71 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում՝ 0.08 հա Երևանում /որից 11,19հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Փոխանակման միջոցով օտարվել են 2,24հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում՝ 0,66 հա Երևանում/, որից 0,90հա գյուղատնտեսական նշանակության հողեր են

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 6402,05 հա, որից 6393,28 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. դեկտեմբերին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	23	2.30	26	8.81	0	0.00	70	12.25	26	3.30
Արագածոտն	12	35.00	0	0.00	2	0.07	72	47.86	35	4.13	1	0.003
Արարատ	63	86.26	123	13.41	2	0.40	136	64.37	69	6.31	0	0.00
Արմավիր	287	3088.68	33	4.25	1	0.02	271	3304.59	50	4.45	0	0.00
Գեղարքունիք	2	0.99	1	0.12	0	0.00	10	11.35	5	0.65	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	6	4.71	6	0.57	0	0.00
Կոտայք	6	53.90	0	0.00	0	0.00	144	46.42	90	9.94	0	0.00
Շիրակ	3	3.52	3	0.20	1	0.08	18	17.66	5	0.26	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	21	17.71	2	0.14	0	0.00
Վայոց Ձոր	7	9.90	0	0.00	3	0.02	4	0.91	3	0.41	0	0.00
Տավուշ	0	0.00	2	0.11	2	0.09	10	8.60	4	0.37	0	0.00
<b>ԸՆԴԱՄԵՆՆԵՐ</b>	<b>380</b>	<b>3278.25</b>	<b>185</b>	<b>20.39</b>	<b>37</b>	<b>9.49</b>	<b>692</b>	<b>3524.18</b>	<b>339</b>	<b>39.48</b>	<b>28</b>	<b>3.31</b>

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 1667 առուվաճառքի գործարքներ /2003թ դեկտեմբեր՝ 780/ այդ թվում 1072-ը՝ գյուղատնտեսական նշանակության /387/, 589-ը՝ բնակավայրերի /387/, 6-ը՝ արդյունաբերական օբյեկտների նկատմամբ /6/:

2004թ. դեկտեմբերին հողերի առուվաճառքներից 588-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2003թ դեկտեմբերին՝ 102 /, այդ թվում 37-ը՝ /6,17 հա/ Երևանում /23/, իսկ 551-ը՝ /3292,82 հա/ մյուս մարզերում /79/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 378-ը միավորը /3273,15 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2003թ

ղեկտեմբերին՝ 11 /, 177-ը՝ /19,97 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /89/, 28-ը՝ /4,68 հա/ հասարակական կառուցապատման հողեր /1/ և 5-ը /1,19հա/ արդյունաբերական /1 /:

2004թ ղեկտեմբերին հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի 1072 առուվաճառքների գործարքներից 378-ն իրականացվել են աճուրդների, 6-ը դատարանի վճռով և 2-ը՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (մախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	12	35.00	60.0	225.0	130.0	58	30.09	800.0	10000.0	3200.0
Ապարան						1	0.38	200.0	1700.0	620.0
Թալին						11	10.55	200.0	1680.0	460.0
Ծաղկահովիտ						2	6.84	170.0	2100.0	270.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	28	32.48	250.0	3370.0	1235.0	50	16.19	740.0	12000.0	2220.0
Մասիս	20	36.06	545.0	710.0	645.0	26	13.89	400.0	8800.0	1900.0
Վեդի	15	17.72	275.0	2790.0	660.0	59	32.95	450.0	7200.0	1480.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	58	7.30	395.0	5250.0	1990.0	188	230.73	650.0	4650.0	1375.0
Բաղրամյան	34	2901.76	45.0	985.0	205.0	53	3060.30	200.0	1500.0	710.0
Վաղարշապատ	193	174.52	45.0	11315.0	1315.0	30	13.56	980.0	14000.0	2330.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	0.99	435.0	445.0	440.0			420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						10	11.35	60.0	1180.0	275.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						4	3.69	360.0	5500.0	930.0
Գուգարք								500.0	6000.0	1800.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						2	1.02	180.0	4000.0	470.0
Տաշիր								100.0	400.0	240.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	16.00	230.0	230.0	230.0	85	12.73	600.0	20000.0	5250.0
Եղվարդ	4	36.90	290.0	1130.0	705.0	50	23.01	380.0	10000.0	3570.0
Հրազդան	1	1.00	230.0	230.0	230.0	4	8.85	250.0	6000.0	1050.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						9	7.27	550.0	2500.0	720.0
Ամասիա						3	5.63	80.0	525.0	170.0
Անի						6	4.77	240.0	800.0	295.0

Աշոցք								60.0	210.0	160.0
Արթիկ	3	3.52	310.0	865.0	510.0			140.0	800.0	290.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	540.0
Կապան						20	14.04	120.0	2000.0	350.0
Մեղրի								400.0	4240.0	850.0
Սիսիան						1	3.67	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	9.90	105.0	205.0	180.0	4	0.91	260.0	4000.0	2400.0
Վայք								120.0	3400.0	950.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.08	100.0	2000.0	660.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						9	8.52	100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 431 առուվաճառքի գործարքներ, որից 160-ը՝ աճուրդային վաճառքներ, 1-ը՝ դատարանի վճռով և 2 ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						33	38810.0	250.0	8000.0	3400.0
Ապարան						1	460.0	250.0	1400.0	340.0
Թային						1	2000.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	62	62950.0	80.0	1770.0	520.0	15	16840.0	300.0	6000.0	1150.0
Մասիս	3	3000.0	525.0	530.0	529.0	31	23261.0	300.0	20000.0	1350.0
Վեդի	58	68130.0	85.0	530.0	290.0	23	23031.0	250.0	2200.0	850.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	25	27000.0	515.0	2100.0	590.0	12	11270.0	300.0	5000.0	1250.0
Բաղրամյան						2	2400.0	180.0	600.0	220.0
Վաղարշապատ	8	15500.0	200.0	285.0	240.0	36	30814.0	300.0	10000.0	1900.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								300.0	2000.0	600.0
Ճամբարակ								100.0	300.0	160.0
Մարտունի						4	3574.3	200.0	600.0	260.0
Մևան	1	1200.0	235.0	235.0	235.0			200.0	2000.0	260.0
Վարդենիս						1	2952.0	100.0	300.0	120.0
Լոռու մարզ										



Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						4	3006.5	150.0	5200.0	840.0
Սպիտակ						2	2720.0	140.0	900.0	190.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						40	41777.0	300.0	10000.0	2300.0
Եղվարդ						43	47824.0	300.0	10000.0	2620.0
Հրազդան						7	9841.0	300.0	8000.0	1680.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	525.0	250.0	3400.0	450.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	3	2000.0	1195.0	1195.0	1195.0	3	2120.0	150.0	900.0	220.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	800.0	150.0	1200.0	400.0
Կապան						1	600.0	150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	2900.0	150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						4	3653.0	150.0	2200.0	640.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 22 գործարքներ 18,67 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ Արարատի /1,66 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0,04հա/, 3-ը Շիրակի /2,21 հա/ և 12-ը՝ Տավուշի /14,76 հա/ մարզերում:

2004թ, դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 936 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9,6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 20,2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 37,8%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ՝ 25,8%-ով:

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանների, 17 անհատական բնակելի տների, 186 հասարակական, 17 արտադրական նշանակության օբյեկտների, 667 միավոր հողերի և 2 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2004թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 38 վարձակալության գործարքների քանակները 2004թ. նոյեմբերի համեմատ աճել են 5,6%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ նվազել են 7,3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ, դեկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 2119,63 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 4,72 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2033,43 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 22,79 հա բնակավայրերի, 12,79 հա արդյունաբերական օբյեկտների, 38,03 հա հատուկ պահպանվող տարածքների, 0,07 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 1,80 հա ջրային և 6.00 հա անտառային հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ

մակերեսներ են արձանագրվել Շիրակի մարզում՝ 800,80 հա, որից 800,45 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ դեկտեմբերին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 564,00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	49	214.88
Արարատ	1	3.00	67	223.72
Արմավիր	0	0.00	1	57.30
Գեղարքունիք	4	133.00	22	168.86
Լոռի	0	0.00	30	38.08
Կոտայք	0	0.00	47	79.02
Շիրակ	10	333.00	97	467.45
Սյունիք	0	0.00	31	103.93
Վայոց Ձոր	0	0.00	30	112.21
Տավուշ	2	95.00	7	3.96
<b>Ընդամենը</b>	<b>17</b>	<b>564.00</b>	<b>381</b>	<b>1469.41</b>

2004թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 856 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8,8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 22,5%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ նվազել է 2,7%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 31.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /16.8%/, առանձնատների /13.0%/ և հողերի /22.9%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 378 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. նոյեմբերի համեմատ նվազել է 3,3%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 14,2 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 399,09 հա /այդ թվում 3,14 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 395,36 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Լոռվա մարզում՝ 228,09 հա, բոլորն էլ գյուղատնտեսական նշանակության:

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 11 և 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2003թ. դեկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է ` 42.9% -ով, իսկ 2004թ.նոյեմբերի համեմատ ` 50.0%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 25,0%:

2004թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1436 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 8,1%-ով, իսկ 2004թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 6,1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14,7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46,4%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***